ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում, ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Եղեգիսի, գ. Չիվայի, գ. Գոմքի և ՀՀ Շիրակի մարզի գ. Արեգնադեմի, գ. Բերդաշենի, գ. Կապսի դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 1-ին չափաբաժնի մասով 2020 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22 պայմանագրում 2021 թվականի փետրվարի 23-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 30.12.2020թ N2215-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր:

Պատվիրատու՝ ***<u>ՀՀ քաղաքաշինության կոմիտե</u>***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
23.09.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22 գնման պայմանագրի

ք. Երևան «23» 02 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա.Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.12.2021թ. N 2215-Ն որոշումը և ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Եղեգիսի, գ. Չիվայի և գ. Գոմքի միջնակարգ դպրոցների տիպային (մոդուլային) շենքերի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման համար Կողմերի միջև 23.09.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել 2021թ. հատկացված գումարի շրջանակներում մատուցման ենթակա ծառայությունների վճարման ժամանակացույցը համաձայն համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են մեկական էջերից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011035731
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

________________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ՝
«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652
Տնօրեն՝

________________ Ա. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
23.09.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22 գնման պայմանագրի
«23» 02 2021թ. կնքված N 3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Եղեգիսի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավե-րով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	71351540/8	ՀՀ Վայոց Ձորի մարզի գ. Եղեգիսի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություն	-	-	785 900	3 071 800	3 071 800	3 071 800	6 407 500	6 407 500	6 407 500	8 518 900	8 518 900	8 518 900	**8 518 900**

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011035731
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

(ստորագրություն) Ա. Մկրտչյան
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Կորյունի 19ա
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652

Տնօրեն՝

(ստորագրություն) Ա. Վարդանյան
Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

N 957-02

«18» 02 2021

ԵՐԱՇԽԻՔ
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ (այսուհետ՝ պրիցիպալ) կողմից կնքվելիք N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22 ծածկագրի պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին 8,518,900 (ութ միլիոն հինգ հարյուր տասնութ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 **հաշվեհամարին փոխանցման միջոցով:**

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22 ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 01.03.2022թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/22 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ Ա. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ՝ Ն. Սարգսյան